

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԱՆՎԱՆՈՂՈՎԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ
ՇԱՐԱՀՅՈՒՄԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ
ՊԱՐՍԿԵՐԵՆՈՒՄ*

Հռիփսիմե Թորոսյան

Բանալի բառեր` անվանողական դարձվածքներ, գոյականական դարձվածքներ, ածականական դարձվածքներ, բայական դարձվածքներ, շարահյուսական անանձնահատկություններ:

Դարձվածքների իմաստային խմբերի մեջ առանձնանում են անձի հատկանիշ արտահայտող կապակցությունները, որոնք բնութագրում են անձին (կամ անձանց) տարբեր տեսանկյուններից` արտահայտելով անձի արտաքին կամ ներքին հատկանիշներ, կամային և բնավորության որակներ (քաջություն, համարձակություն, վախկոտություն, մտավոր կարողություն, իմացություն, համառություն, նպատակասլացություն, հնարամտություն և այլն)[1]: Այս կարգի կապակցությունները դրսևորում են իմաստակառուցվածքային յուրահատկություններ` արտահայտության պլանում հանդես գալով երկանդամ, եռանդամ կամ բազմանդամ կառուցատիպերով[2]: Այդպիսի կապակցությունների բաղադրիչների դերում կարող են հանդես գալ`

ա) կենդանի նշանակող բառեր (հայ. առյուծի սիրտ ունենալ, ուղտի ականջում քնել, պրսկ. *gorbe dar bağal dāştan`* խորամանկություն անել (բռց. գրկում կատու ունենալ)), *muš davāndan`* կռիվ գցել (բռց. կատու վազացնել),

բ) թռչուն կամ սողուն նշանակող բառեր (հայ. աղավնու պես անմեղ, օձի պես իմաստուն, պրսկ. *mesl-e mār-e zaxm xorde`* վիրավոր օձի պես),

գ) մարդու մարմնի մասերի անվանումներ (հայ. լեղին ջուր կտրել, քար սիրտ, գլուխը բարձր, պրսկ. *pošt-e sar-e kasi namāz xandan`* վստահել մեկին (բռց. մեկի գլխի հետևում նամազ կարդալ), *guš-aš sangin ast`* լավ չի լսում (բռց. ականջը ծանր է)),

դ) գերազույն ոգու կամ աստվածության անվանումներ (Աստծո պես` նման, Քրիստոսի պես` նման),

ե) կրոնական, պատմական անձնավորության անվանումներ (պրսկ. *mesl-e Rostam`* Ռոստամի նման, *mesl-e Majnun`* Մաջնունի նման, *mesl-e barādarān-e Yusef`* Հովսեփի եղբայրների նման)[3],

զ) հատկանշային առարկաների անվանումներ (հայ. մեղրի պես քաղցր, ծաղկի պես հոտավետ),

է) գունանուններ (հայ. պատի պես ձերմակ, ածուխի պես սև, նռան` նռան հատիկի նման կարմիր, պրսկ. *siyāh šodan`* դժբախտանալ (բռց. սև դառնալ))[4] :

* Հոդվածն ընդունվել է 02.03.20:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնը: 10.03.20:
223

Հայերենի դարձվածքների շարահյուսական առանձնահատկություններին իրենց աշխատանքներում անդրադարձել են Պ. Բեդիրյանը, Խ. Բադիկյանը, Լ. Խաչատրյանը, Մ. Բադադյանը[5]: Պարսկերենի դարձվածքների շարահյուսական գործառույթներին անդրադարձել են Յու. Ռուբինչիկն ու Չ. Գոլևան[6]:

Սույն հոդվածում առանձին ներկայացվում են անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների խմբերը՝ գոյականական, ածականական, բայական, և մեկնաբանվում են նրանց շարահյուսական յուրահատկությունները:

Ա. Գոյականական դարձվածքների շարահյուսական առանձնահատկությունները.

Անձի հատկանիշ արտահայտող գոյականական դարձվածային միավորները գոյականական կայուն բառակապակցություններ են, որոնց գերադաս անդամը գոյական է կամ փոխանվանաբար գործածված որևէ այլ խոսքի մաս[7]:

Անձի հատկանիշ արտահայտող գոյականական դարձվածքները շարահյուսական մակարդակում ձեռք են բերում գոյական խոսքի մասին բնորոշ քերականական հատկանիշներ: Գոյական խոսքի մասը նախադասության մեջ կարող է հանդես գալ ենթակայի, կոչականի, վերադրի, որոշչի, խնդրի ու պարագայի պաշտոններով: Օրինակ,

- ենթակա - Քե նման մի խատ **գրի սևն ու սպիտակը ճանաչող** մեր մեջ նստած էլներ ու ինձի ասեր (ՀԼԴԲ, 177 [8],
- կոչական - Իմ խելո~ք, **Արբահամի գա~ռ**, – լսվեց մոր գորովալի ձայնը (ՀԼԴԲ, 1),
- ստորոգելիական վերադիր - **Անդուռ բերան է**, ամեն ինչ կասի. նրան վստահել չի կարելի (ՀԼԴԲ, 21), Նա որոշել է վերջապես մեզ համար մի~մի գույգ նալիկ պատրաստել, որի շնորհիվ էլ Արուսի **աչքի լույսն** է դարձել (ՀԼԴԲ, 49),
- ձևի պարագա - Դու դեռ **անապոջ գրայի պես** մեջ մի՛ ընկնի. քեզ ո՞վ խոսեցրեց (ՀԴԸԲ, 279; 208)[9],
- անուղղակի խնդիր - Գնացիր եկար, էդ **շուն բռնողի հետ** ընկերացար (ՀԼԴԲ, 465),
- որոշիչ - Թո՛ղ, թո՛ղ, դու ավելի ես աննամուս դարձել, դե ե՛լ, քո **գամաք ծորի աղվես** պառավին գրկի ու տրտիկն տուր (ՀԼԴԲ, 38):

Պարսկերենի գոյականական դարձվածքները շարահյուսական մակարդակում հիմնականում հանդես են գալիս ենթակայի կամ ստորոգելիական վերադրի պաշտոններով, օրինակ,

- ստորոգելիական վերադիր

... پسری دارم که یکتا فرزندی من است و دنیای من و جان من و امید من و نور چشم و میوه دل و قوت زانوی من همانا اوست. ... pesari dāram ke yektā farzand-e man ast va donyā-ye man va jān-e man va omid-e man va **nur-e čašm** va mive-ye del va qovat-e zānu-ye man hamānā ust (ՓՓՓԸ, 510)[10]. ...մի տղա ունեմ, որ իմ մի հատ գավակն է, իմ աշխարհը, իմ հոգին, իմ հույսը, **իմ աչքի լույսը**, սիրելին և ծնկիս ուժը հենց նա է:

... روزنامه نگاران ممتاز ایرانی **مع مجلس** بودند گل می گفتند گل می شنفتند.

... ruznāmenegārān-e momtāz-e irāni **šam’-e majles** budand gol mi goftand gol mi šenoftand (ՓՓՓԸ, 354). ... իրանցի հայտնի լրագրողները հասարակության սիրելին էին (բռց. **երեկույթի մոմը**), փայլում էին իրենց ճարտարախոսությամբ:

فريدون **گل سر سيد** کلاس بود. از تمام شاگردان آن دبستان متشخص تر بود.

Fereydun gol-e sar-e sabad-e kelās bud. Az tamām-e šāgerdān-e ān dabestān motašaxestar bud (ՓՔՓԸ, 450). Ֆերեյդունը դասարանի աստղն էր (բռց. գամբյուղի ծաղիկ): Այդ դպրոցի բոլոր աշակերտներից ամենահայտնին էր:

احمد خان بعد از اين واقعه مثل گراز تير خورد ه بود پيش كدخدا گفته بود تا انتقام نگیرد آرام نخواهد نشست.

Ahmad xān ba’d az in vāqe’e mesl-e gorāz-e tir xorde bud piš-e kadxoda gofte bud tā enteqām nagirad ārām nemišavad (ՓՔՓԸ, 440). Ահմադ խանը այդ դեպքից հետո վիրավոր վարագի էր նման, գյուղապետի մոտ ասել էր, որ մինչև վրեժ չլուծի, չի հանգստանալու:

Բ. Ածականական դարձվածքների շարահյուսական առանձնահատկությունները.

Անձի հատկանիշ արտահայտող ածականական դարձվածքները գոյականական դարձվածքների նման ունեն անվանողական իմաստ և զուրկ են հաղորդակցական հատկանիշներից: Ածականական դարձվածքները վերահիմաստավորված կապակցություններ են, հարաբերակից են ածականների կամ հատկանիշային այլ խոսքի մասերին: Ըստ Խ. Բաղիկյանի՝ «ածականական ՂՄ-ների իմաստաբերականական հիմնական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ բոլորովին պարտադիր չէ, որ ածականական դարձվածքի գերադաս անդամը անպայման ածական լինի, ինչպես պնդում են ուսումնասիրողներից շատերը»[11]: Իսկ Լ. Սակաևան, Ֆ. Ֆատկուլլինան, Ռ. Յալալովան նշում են, որ ածականական դարձվածքները արտահայտում են անձի կամ իրի որակական հատկանիշ, և այս կապակցությունների գլխավոր անդամն արտահայտված է ածականով[12]: Պ. Բեդիրյանի՝ ածականական դարձվածքների գլխավոր բաղադրիչի արտահայտության մասին տեսակետը համընկնում է վերոնշյալ տեսակետի հետ: Նա նշում է, որ ինչպես բայական դարձվածքների գլխավոր բաղադրիչն է արտահայտված բայով, այնպես էլ գոյականական և ածականական դարձվածքների գլխավոր բաղադրիչը՝ գոյականով և ածականով[13]:

Անձի հատկանիշ արտահայտող ածականական դարձվածքները շարահյուսական մակարդակում կատարում են ածական խոսքի մասին բնորոշ պաշտոններ: Հայերենի ածականական դարձվածքները հանդես են գալիս հետևյալ պաշտոններով.

- ձևի պարագա. Մերկ, բոլորովին մերկ, ինչպես ասում են՝ Աղամի (Եվայի) զգեստներով մտել էր արտաքնոց և ինքնասպանություն էր գործել (ՀՂԸԲ, 11; 61),
- ստորոգծելիական վերադիր. Մամիկոնը խոտը բերանին անասուն է: (ՀԼԴԲ, 297), Նրանք կգան, կլակեն կթափեն, կջարդեն, կերգեն, կգնան ու չեն տալի, քանի որ Արմենի կողո հաստ է ու մարդամոտ չէ (ՀԼԴԲ, 327),
- միջոցի անուղղակի խնդիր. Դե, որ նախանձ ասած բանը չլինի աշխարհի երեսին, այն ժամանակ ամենքն էլ իրարու հետ պարզ կլինեն, իրարու կսիրեն: Իմ կարճ խելքով այսքանն են հասկանում (ՀԼԴԲ, 281),
- որոշիչ. Մեզ մի ոտոր բեթև տղա է հարկավոր, – այստեղ–այնտեղ ուղարկելու: (ՀԼԴԲ, 482) Նա սպառնաց, որ հենց հիմա կգնա ու զանգ կտա կենտկոմ, այդ կապր կտրած Գարեգինին ու Ռուբենին սանձելու համար (ՀԼԴԲ, 313):

Պարսկերենում այդ կապակցությունները հիմնականում հանդես են գալիս որպես որոշիչ, օրինակ,

این دختر صورت قشنگی دارد مثل آفتاب به آفتاب می گوید تو در نیا من در بیایم.

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2020

*In doxtar surat-e qashangi dārad, **mesl-e āftāb**, be āftāb mi guyad to dar nayā man dar biāyam (ՓՔՓԸ, 25).* Այս աղջիկը գեղեցիկ դեմք ունի՝ **արևի նման**, արևին սաուն է՝ դու դուրս մի՛ արի, ես դուրս գամ:

من هنوز باین دنیایی که در آن زندگی می کنم انس نگرفته ام و حس می کنم که دنیا برای من نیست بلکه برای یکدسته آدم های بی حیا، پررو، گدامنش، معلومات فروش، چهارپادار و **چشم و گرسنه**.

*Man hanuz be in donyā-yi ke dar ān zendegi mikonam ons nagerefte-am va hes mi konam ke donyā barāye man nist balke barāye yekdaste ādamhā-ye bi hayā, por ru, gedāmaneš, ma'lumāt foruš, čahārpādār va **češm va del gorosne** (ՓՔՓԸ, 157).* Այս աշխարհում, որ ես ապրում եմ, դեռ չեմ վարժվել և զգում եմ, որ աշխարհը ինձ համար չէ, այլ մի խումբ մարդկանց՝ անամոթ, պնդերես, փոքրիկ, ծախու, ազահ (բռց. **աչքն ու սիրտը սոված**):

مادرم اصلا یادمش رفته بود که من پنجسال تمام در پاریس آزاد بوده ام و باز هم خیال می کرد که من دختر ۱۷ ساله **چشم و گوش** هستم.

Mādaram aslan yād-aš rafte bud ke man panj sāl-e tamām da pāris āzād bude-am va bāz ham xiyāl mi kard ke man doxtar-e 17 sale-ye češm va guš baste-yi hastam (ՓՔՓԸ, 157). Մայրս ընդհանրապես չի հիշում, որ ես ամբողջ հինգ տարի Փարիզում ազատ եմ եղել, և նորից կարծում էր, որ ես 17 տարեկան անփորձ (բռց. **աչքն ու ականջը փակ**) աղջիկ եմ:

شخص **بی چشم و رویی** است حیا را خورده و آبرو را قی کرده است.

Šaxs-e bi češm o ru-yi ast hayā ra xorde va āberu ra qey karde ast (ՓՔՓԸ, 73). Անամոթի (բռց. **անաչք ու անդեմք**) մեկն է, ամոթը կերել է, համբավը՝ թքել:

Հայերենի ածականական դարձվածքները արտահայտում են լրացում-լրացյալի հարաբերություններ. ինչպես, խոտը բերանին – խեղճ, հիմար, աչքի լույս – սիրելի, աչքի փուշ – չսիրված, ատելի, աչքից ընկած – արհամարհված, անտարբերության մատնված, օձի կծած – չար, չարական: Պարսկերենում հանդիպում են իզաֆեթային կապով, նախդրային կապով: Իզաֆեթային կապով ձևավորված դարձվածքներից է. borj-e zahr-e mār - չար, ջղային, - پنجه آفتاب – շատ գեղեցիկ, dar-e xāne bāz - իյուրընկալ[14]: Իզաֆեթային կապն իրանական որոշ լեզուներին բնորոշ բառերի կապակցման շարահյուսական եղանակ է, որ իրացվում է լրացուցիչ մասնիկի օգնությամբ:

sar be zir – խոնարհ, հնազանդ, سر - سر به زیر - Երեսնակ, sar be havā – ցրված, پا به راه, - پا به راه - sar be havā - Երեսնակ:

Պարսկերենում հանդիպում են համաստորադասական կապով ձևավորված հետևյալ կապակցությունները՝

دست و دل باز dast o del bāz	արատածեռն, մեծահոգի բռց. ձեռքն ու սիրտը բաց
چشم و دل پاک	արտաբաց

čāšm o del pāk	բոց. աչքն ու սիրտը մաքուր
چشم و دل گرسنه	ժլատ, հաշվենկատ
čēšm o del gorosne	բոց. աչքն ու սիրտը բաց

Վերոբերյալ օրինակներում դարձվածքների առաջին և երկրորդ բաղադրիչներն արտահայտում են համադասական հարաբերություն, որոնք երրորդ բաղադրիչի նկատմամբ ցուցաբերում են ստորադասական հարաբերություն:

Գ. Բայական դարձվածքների շարահյուսական առանձնահատկությունները.

Հայերենի և պարսկերենի անձնանիշ բայական դարձվածքները անվանողական դարձվածքներ են, որոնք, հարացույցային ձևեր ընդունելով, ձեռք են բերում նաև հաղորդակցական գործառույթ:

Բայական դարձվածքները շարահյուսական մակարդակում հանդես են գալիս թե՛ անդեմ, թե՛ խոնարհված ձևերով: Առաջին դեպքում դարձվածքն ունի անվանողական արժեք և կարող է կատարել տարբեր շարահյուսական պաշտոններ: Երկրորդ դեպքում դարձվածքը հանդես է գալիս որպես ստորոգյալ, և գործածվում է սահմանափակ ժամանակաձևերով: Հմնտ. հայերենի բայական դարձվածքների գործառական դերը շարահյուսական մակարդակում.

- անցյալ անկատար – Բարսեղը հոգսերից աչք չէր բացում, որ սիրտ ու ժամանակ ունենար նրանց տրամադրելու (ՀԼԴԲ, 57),
- անցյալ անկատար - Երեք օր ու գիշեր քեֆ ուրախությունից աչք չէին բացում (ՀԴԸԲ, 125; 1814),
- անցյալ կատարյալ - Ինձ տեսնելուն պես կերպարանափոխվեց, բակյալի ջուր դարձավ (ՀԼԴԲ, 103): Թուլին երեսանց աչքով աչք չունեի Վանեսի հետ, բայց ներքնապես նա չէր կարող որևէ մեկին չսիրել (ՀԴԸԲ, 122; 1787),
- անկատար ներկա - Մենք աշխատում ենք, որ դրանք դպրոց ունենան, ուսումն առնեն, աչքերը բացվի, կույր չմնան, բայց դրանք չեն հասկանում, էլի իրենց էշն են քշում (ՀԼԴԲ, 103):

Բայական դարձվածքները երբեմն կարող են կիրառվել որպես որոշիչ, օրինակ, Բոլորն աշխատում են, սա էլ իր համար ձանձ քշելու տեղ է գտել (ՀԴԸԲ, 887, 358):

Պարսկերենի բայական դարձվածքներնը գործածվում են հետևյալ ժամանակաձևերով.

- անցյալ կատարյալ.

... هر چه ممکن بود سبزیش را پاک کردم و آنقدر چمباتمه زده آتش بافورش را پف خواهد نمود!
 ... har če momken bud sabziš ra pāk kardam va ānqadr bād dar āstinaš andāxtam ke...

rāsti rāsti tasavor mi kard be yek kalame-ye u xod-e jenerāl-e Bārātof ham bā kamāl-e eftexār čombātme zade āteš-e bāfur-aš rap of xāhad nemud! (ՓՔՓՇ, 312) ... ինչքան հնարավոր էր՝ շողոքորթեցի (բոց. մեկի համար կանաչի մաքրել), գովաբանեցի (բոց. թևքը քամի գցել)... որ ճիշտ ճիշտ պատկերացնում էր, որ իր մի խոսքով հենց ինքը՝ գեներալ Բարատոֆը, ամբողջ հպարտությամբ ծնկի իջնելով, կվառի իր ծխամորձը:

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2020

من از شادیِ ر پوستِ خو نیمگنجیدم و بکلی محو جمال آن دختر شده بودم.

Man az šādi dar pust-e xod nemiganjidam va bekoli mahv-e jamāl-e ān doxtar šode budam. (ՓՐՓՇ, 100) Ես ուրախությունից տեղս չէի գտնում (բրջ. կաշվի մեջ չտեղավորվել) և ամղջությամբ ոչնչացել էի այդ աղջկա գեղեցկությունից:

بالاخره کینه درونیش ظاهر شد و او زهر خو را بر من ریخت.

Belāxare kine-ye daruniš zāher šod va u zahr-e xod ra bar man rixt. (ՓՐՓՇ, 306)

Վեջապես ներսի քենը դուրս եկավ և իր թույնը թափեց ինձ վրա:

- վաղակատար ներկա.

هر چه بیشتر نصیحتش کنم کمتر توجه کند گویی پنبه را گوش گذاشته است.

Man har če bištar nasihat-aš konam kamtar tavajoh konad guyi pambe dar guš gozāšte ast. (ՓՐՓՇ, 98) Ես ինչքան շատ խրատեմ, քիչ է ուշադրություն դարձնում, կարծես ականջը բամբակ դրած լինի:

- անցյալ անկատար.

... روزنامه نگاران ممتاز ایرانی شمع مجلس بودند گل می گفتند گل می گفتند.

... ruznāmenegārān-e momtāz-e irāni šam-e majles budand gol mi goftand gol mi šenoftand. (ՓՐՓՇ, 354) ... իրանցի հայտնի լրագրողները հասարակության սիրելի ձևն, փայլում էին իրենց ճարտարախոսությամբ (բրջ. ծաղիկ ասել, ծաղիկ լսել):

Պարսկերենի բայական դարձվածքները կարող են հանդես գալ ուղիղ խնդիր,

... بنای م نیانیدن و خوش آمدگویی و تملق را گذشت...

... banā-ye dom jombānidan va xošāmadguyi va tamaloq ra gozašt (ՓՐՓՇ, 254). Սկսեց պոչ խաղացանել, հաճոյախոսել և շողոքորթել:

همیشه کارش اینستکه نزد این و آن م جنباند.

Hamiše kār-aš in ast ke nazd-e in va ān dom bejombānad. (ՓՐՓՇ, 254) Նրա գործն այն է, որ միշտ սրա նրա մոտ պոչ խաղացնի:

Հայերենի բայական դարձվածքները հիմնականում ձևավորվում են ստորադասական կապով, ինչպես, հայ. անձնական հաշիվները մաքրել, արյունը երեսին խփել, բակլայի ջուր դառնալ, անունը գողանալ, աչքը չբանալ: Այս կապակցություններում գերադաս բաղադրիչը բայն է, որին լրացնում են անվանական բաղադրիչները: Պարսկերենի բայական դարձվածքներում ստորդասական հարաբերություններից բացի հանդիպում են նաև համագոր հարաբերություններ, օրինակ,

سیاه شدن	դժբախտանալ
siyāh šodan	բրջ. սև դառնալ
آتشی شدن	բռնկվել
ātaši šodan	բրջ. կրակոտ դառնալ

Այս կապակցություններում անվանական մասը ոչ թե ստորադասական հարաբերությամբ է կապակցված բայական անդամին, այլ համագորությամբ:

Ստորադասական հարաբերությամբ դարձվածքներում գլխավոր անդամը բայական բաղադրիչն է, իսկ անվանական մասը՝ երկրորդական, ինչպես՝

مگس پراندن	ծուլություն անել
------------	------------------

ՄԵՏՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2020

<i>magas parāndan</i>	բռց. ճանճ թռցնել
سماق مکیدن <i>somāq makidan</i>	սին հույսեր ունենալ բռց. սոմախ ծծել
دم جنباندن <i>dom jombāndan</i>	պոչ խաղացնել բռց. պոչը շարժել

Հայերենում կան նաև համաստորադասական կապով ձևավորված դարձվածքներ, իսկ պարսկերենում զուգադրական (կոպուլյատիվ) կապով ձևավորվածներ: Հայերենի համաստորադասական կապով բայական դարձվածքներից են, օրինակ, աղ ու հացը մոռանալ – ապերախտ լինել, աշխարհի խերից–շառից հասկանալ – բանիմաց լինել, կյանքի գաղտնիքները հասկանալ, աչքն ու հոնքը բացվել – ուրախանալ, տրամադրությունը բարձրանալ, բահով – փայտով կարդալ գիտցող – կարդալ չիմացող, անգրագետ կամ կիսագրագետ: Համաստորադասական կապով ձևավորված վերոնշյալ կապակցություններում միաժամանակ գործում է և՛ համադասություն, և՛ ստորադասություն:

Պարսկերենի զուգադրական կամ կապուլյատիվ կապով ձևավորված բայական դարձվածքները համադասական *va* շաղկապով ձևավորված կապակցություններ են, որոնց բովանդակությունը բխում է երկու հավասարազոր բաղադրիչ մասերի իմաստներից. բաղադրիչ մասերն առանձին իմաստ չեն արտահայտում և կարող են պատկանել նույն իմաստային դաշտին կամ լինել իմաստով հականիշ միավորներ: Ա. Վերետեննիկովը դարձվածքների այս տեսակը համարում է դարձվածքների առանձին խումբ, քանի որ վերջիններս օժտված են իմաստակառուցվածքային այնպիսի հատկանիշներով, որոնք բնորոշ չեն դարձվածքների այլ տեսակների[15]: Օրինակ՝

گندم نمودن و جو فروختن <i>gandom nemudan o jou foruxtan</i>	խաբեությանը զբաղվել բռց. ցորեն ցույց տալ և գարի վաճառել
گل گفتن و گل شنیدن <i>gol goftan o gol šenidan</i>	ջան ասել, ջան լսել բռց. ծաղիկ ասել ու ասել լսել
لب رودخانه بردن و تشنه بر گرداندن <i>lab-e rudxāne bordan o tešne bar-gardāndan</i>	տանելը ծովը, ծարավ հետ բերել բռց. տանել գետը ու ծարավ հետ բերել
مار خوردن و افعی شدن <i>mār xordan o afi šodan</i>	փորձառու դառնալ բռց. օձ ուտել և իժ դառնել

Հայերենի և պարսկերենի անվանողական դարձվածքների գործառական արժեքի քննությունը բացահայտում է այդ կապակցությունների քերականական յուրահատկությունները: Անվանողական դարձվածքները շարահյուսական մակարդակում հանդես են գալիս գոյական, ածական, բայ խոսքի մասերին բնորոշ պաշտոններով: Այդ կարգի քննությունը, անվանողական դարձվածքների իմաստակառուցվածքային ընդհանրությունները ցուցաբերելով հանդերձ, ի հայտ է բերում նաև նրանց շարահյուսական յուրահատկությունները, որոնք պայմանավորված են տարբեր լեզվակիր հանրությունների աշխարհընկալման մակարդակով, այլ կերպ ասած՝ լեզվամտածողությամբ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Арсентьева Е. Ф., Сопоставительный анализ фразеологических едениц (на материале фразеологических едениц, семантически ориентированных на человека в английском и русском языках, Казань, 1989, էջ 37-93:
2. Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքների մասին հանգամանորեն տե՛ս՝ Հ. Թորոսյան, Հայերենի և պարսկերենի անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածքների կառուցատիպերը, Ջահուկյանական ընթերցումներ, Գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Ե. 2019, Անձի հատկանիշ արտահայտող գոյականական դարձվածային միավորները հայերենում եվ պարսկերենում, Հայագիտական հանդես, 4 (42), Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան, Ե. 2018, Хачатрян Л., Торосян Р., Варианты фразеологических сочетаний со значением признака личности в армянском языке, European journal of humanities and social sciences, # 1, Vienna, 2018:
3. Пейсиков Л., Лексикология современного персидского языка, Москва, 1975, էջ 190:
4. Խաչատրյան Լ. Մ., Ավետիսյան Լ.Ն., Համեմատություն դարձվածային արտահայտությունները հայերենում (5-16-րդ դդ.), Ե. 2015, էջ 25:
5. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն Ե. 1973, Բադիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե. 1986, Խաչատրյան Լ., Ավետիսյան Լ., Համեմատություն դարձվածային արտահայտությունները հայերենում (5-16-րդ դդ.), Ե. 2015: Բադադյան Ս., Անձի հատկանիշ արտահայտող դարձվածքները հայերենում, ռուսերենում և անգլերենում (Սեղմագիր թեկնածուական ատենախոսություն), Ե. 2017:
6. Голева Г. С., Фразеология современного персидского языка, М. 2006, Рубинчик Ю. А., Основы фразеологии персидского языка, М. 1981.
7. Բադիկյան Խ. Գ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե. 1986, էջ 93:
8. Սուքիասյան Ա., Փալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե. 1975:
9. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., Ե., 2011:
10. Голева Г., Фарси-русский фразеологический словарь, М., 2006.

11. Տե՛ս, Բաղիկյան Խ. Գ., նշվ. աշխ., էջ 128:
12. Сакаева Л. Р., Фаткулина Ф. Г., Ялалова Р. Р., Структурно-грамматическая характеристика субстантивных и адъективных фразеологических единиц, характеризующих болезнь-здоровье в английском, немецком и русских языках, Вестник Башкирского университета, Республика Башкортостан, Т. 22, # 3, էջ 736:
13. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե. 1973, էջ 134:
14. Իզաֆեթային կապն իրանական որոշ լեզուներին բնորոշ բառերի կապակցման շարահյուսական եղանակ է, որ իրացվում է լրացուցիչ մասնիկի օգնությամբ (e):
15. Веретенников А. А., Очерки глагольной фразеологии персидского языка, М., 1993, էջ 23:

Համառոտագրություններ

- ՀԼԴԲ - Սուքիասյան Ա., Գալստյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե. 1975:
- ՀԴԸԲ - Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., Ե. 2011:
- ՓՏՍՐ - Գոլեա Գ., Фразеология современного персидского языка, М. 2006, Рубинчик Ю., Основы фразеологии персидского языка, М. 1981.

ԱՄՓՈՓՈՒԿԻՐ

**Անձի հատկանիշ արտահայտող անվանողական դարձվածքների շարահյուսական առանձնահատկությունները հայերենում և պարսկերենում
Հռիփսիմե Թորոսյան**

Հոդվածում տրվում են հայերենում և պարսկերենում անձի հատկանիշ արտահայտող անվանողական դարձվածքների շարահյուսական առանձնահատկությունները և բացահայտվում են այդ կապակցությունների գործառական արժեքները: Անվանողական դարձվածքները, դառնալով նախադասության անդամ, հանդես են գալիս գոյական, ածական, բայ խոսքի մասերին բնորոշ շարահյուսական պաշտոններով: Այս կապակցությունների շարահյուսական կիրառությունները ցույց են տալիս, որ զուգադրվող լեզուների դարձվածքները, ընդհանրություններ ցուցաբերելով հանդերձ, ի հայտ են բերում նաև շարահյուսական յուրահատկություններ:

РЕЗЮМЕ

**Синтаксические особенности фразеологических единиц показывающие признак личности в армянском и персидском языках
Рипсима Торосян**

Ключевые слова и выражения: номинативные фразеологические единицы, субстантивные фразеологические единицы, адъективные фразеологические единицы, глагольные фразеологические единицы, синтаксические особенности.

В статье представлены синтаксические особенности номинативных фразеологических единиц показывающий признак личности и выявлены практические значения этих сочетаний. Номинативные фразеологические единицы, выступая в роли членов предложений, выявляют синтаксические особенности существительных, прилагательных, глаголов. Синтаксические употребления этих сочетаний показывают, что идиомы сравнимых языков, не смотря на общность, имеют синтаксическую оригинальность.

SUMMARY

The Syntax Peculiarities of Phraseological Units Denoting a Human's Appearance in Armenian and Farsi Hripsime Torosyan

Key words: *nominal idioms, substantive idioms, adjective idioms, verbal idioms, syntax peculiarities.*

The syntax peculiarities and practical significance of idioms denoting a human's appearance are shown in this article. The linguistic material attests that nominal phraseological units as a sentence member show syntax functions of nouns, adjectives and verbs. The syntax applications of these units reveal that the idioms of comparable languages while having universalities, at the same time are distinguished by their originality.